

է բարեխառնել :

Փորոտիքը ինչ և իցէ կերպով ալ կերակուր շինուի՝ միշտ դժուարամարս կ'ըլլայ, և սաստիկ պարարտ . աւելի գեղացւոց կը յարմարի, քաղաքացւոց մէջէն ալ սաստիկ աշխատութիւն ունեցողներուն :

Ըստնց վրայ համառօտ տեղեկութիւն մը ուզեցինք տալ, որովհետև հասարակ մտին և ուրիշ բաներուն վրայ խօսելէն վերջը՝ բնական կարգը աստնց եկաւ . բայց աս յայտնի է որ մէկը աս բաներով միայն չկրնար շարժիլ, հապա միշտ պիտի նայի իրեն աշխատութեան տեսակը, իրեն առողջութիւնը և ստամոքսին ամրութիւնը : Արբեմն ալ օդը կամ եղանակը շատ տարբերութիւն կ'ընեն . ինչպէս ամառը աս տեսակ ծանր բաներ ուտելը շատ աւելի փնասակար է քան թէ ձմեռը . իսկ օդի կողմանէ աս տարբերութիւնս կայ որ տեղ տեղ թէ որ մէկը աս տեսակ բաներ ուտէ՝ կը փնասուի, ու տեղ տեղ ալ աս տեսակ բաները այնչափ չեն փնասեր . ուստի այսպիսի նիւթի մէջ թէ որ ումանց փորձառութեանը դէմ ելլէ մեր ըսածը, պէտք է զարմանան, յիշելով վերի այլևայլ պատճառները :

Հ . Հ . Թ

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Տեսակ տեսակ վերնիներ շինելու կերպը :

Ըն այլևայլ խէժերէ բաղադրած ծեփը որ շատ նիւթերու վրայ կուտան, ինչպէս տան կարասիներու, կառքերու, գաւաթներու, տուփերու¹, ափսէներու² և ուրիշ անհամար բաներու, որպէս զի անոնց աւելի փայլունութի մը տան, կ'ըսուի վերնիչ³ : Հիմակուան ատենս թէ շինելուն⁴ կերպը և թէ գործածելուն ե-

ղանակը վերջի կատարելութիւն հասած է : Չիներն ու Նափոնները շատոնց գիտէին աս օգտակար արհեստը, բայց Ընգղիացիք զանոնք անյուշին՝ թէ գոյներուն աղուորութեամբը և թէ ան վերնիչոտած ամաններուն վրայի աղուոր քաշուածքներովը :

Վերնիչի համար գործածուած խէժերը անօթներուն վրայ անանկ բարակ մուր մը կը կապեն որ կարծես թէ ան ամանները ապակէ շինուած են : Ըս պայծառութենէն զատ վերնիչով ամանները աւելի դիմացկուն կ'ըլլան . բայց աս ամրութիւնն ալ խէժերու աղէկութենէն կը կախուի : Այժմ ան կարծր նիւթերէն է որ քանի որ իրենց բնական վիճակին մէջն են՝ ամենեւին չեն կրնար վերնիչի տեղ գործածուիլ : Աւստի նախ պէտք է ասոնք հեղուկ դարձնել . աս բանս ընելն ալ շատ դիւրին է, որովհետև աս խէժերը եղերու ու գինիի ոգիքի հետ խառնուելով կը լուծուին . անոր համար աղէկ վերնիչ շինելը խէժերուն ընտրութեանն ու բաղադրութեանը վրայ է :

Աղի մէջ լուծած խէժը Իւղային վերնիչ կ'ըսուի . իսկ գինիի ոգիքի (այսինքն ալքոհոլի) մէջ լուծածը Բֆիւսոր վերնիչ կ'ըսուի . բայց երբոր ցնդական եղի՝ մէջ լուծես, ան ատեն վերնիչդ իւղային չըսուիր, հապա ցնդական վերնիչ կ'ըսուի : Սովորաբար եղոտ վերնիչներու մէջ բւեկնի եղ² կը խառնեն, որպէս զի աղէկ չորնան : — Արբոր լուծած խէժը գինիի ոգիքի կամ ցնդական եղի մէջ դնես, մթնոլորտին ազդեցութեամբը ոգիքը կամ եղը կը ցնդի ու միայն խէժը կը մնայ առջինին պէս փայլուն ու կարծր : Ընոր համար նիւթի մը վրայ որչափ բարակ քսես վերնիչը, այնչափ շուտով եղը կը ցնդի ու մէկէն կը չորնայ : Ագիւսոր վերնիչները աւելի շուտով կը չոր-

1 Գոսնոս : 2 Թեփոփ : 3 Բուղան, վերնիչ :

1 Ցնդական եղ կ'ըսուին անոնք որ թորանոցով այլևայլ ծաղկերէ ու բոյսերէ կը հանեն, որ սաստիկ հեղուկ են ու քիչ տաքութեամբ մը կը ցնդին : 2 Թիւրեմէնի եղը :

նան, փայլուն կ'ըլլան ու նիւթին հետ խիստ աղէկ կը կպչին:

1 Վէն տեսակ խէժով վերնիչ չլինուիր. ոմանք ինչպէս որ պէտք է նէ սաստիկ կարծր ու կպչուն չեն, ոմանք ալ այնպէս կպչուն են որ ուրիշ նիւթի մը դպչեցնուն պէս կ'այլալին ու կը կպչին. ոմանք ալ կան որ թէպէտև իրենք իրենցմէ չեն լուծուիր, բայց ուրիշ խէժերու հետ հալեցընես նէ կը լուծուին. ասանկ է քոփալ՝ ըսուած խէժը, որ շատ կարծր է, և լուծուելէն ետքը ուրիշ կակուղ խէժի մը հետ խառնելով խիստ աղէկ վերնիչ կ'ըլլայ. բայց աս չլուծուիլը լուծող նիւթէն աւելի կը կախուի. ինչպէս ջուրը ամենակին ազդեցութիւն չունի խէժին վրայ. նոյնպէս գինիի ոգիքին ալ երբոր ջրային մասունքը աղէկ կրակով մը ցնդած չէ՝ խիստ թեթեւ կերպով կ'ազդէ խէժին վրայ:

2 Երնիչ շինելու համար գործածուած դիւաւոր խէժերը ասոնք են. Սենեկալի խէժ, կաթիլ խէժ, գիհի խէժ, ձիւթ, վիշապարիւն:

1 Անուշահոտ խէժ մըն է որ ծառերուն կեղևը ճղքելով կը վազէ. հիւսիսային Ամերիկային մէջ կը բուսնի: Գղ. Copal.

2 Լուծող կ'ըսուին ան հեղանիւթները՝ որոնց մէջ խէժը ձգելով մասունքները կը քայքային, ինչպէս են եղերը, ցքին ու ոգիքները:

3 Աս խէժը Հնդկաստանէն կուգայ մեծ կտորներով. շուտով կը փշրի, սաստիկ դեղին է, ու զորաւոր մաքրողական. ծառը փշոտ է՝ որ ճեղքելով կը վազէ. առաջ կակուղ է, արևուն մէջ կը պնդանայ:

4 Գեղին, մաքուր, փայլուն ու թափանցիկ է. կրակով շուտ հալողը ազնիւ է. գիհի (արքաճ) ըսուած ծառէն կ'ելէ, որուն խո. ճինէ՛րօ կ'ըսեն. իսկ խէժին տճ. անփէրոս, խո. սոնփոսփոս կ'ըսեն:

5 Ձիւթը հերձի (սոփը աղածը) ծառին խէժն է, որ ամառ ատեն ինքիքն կը վազէ անոր բունէն ու ոտներէն, հատիկ հատիկ ձերմակ ու քիչ մը կիւրոնագոյն (իւնիսի) փայլուն, թափանցիկ ու անուշահոտ. աղէկը Գիոս կղզիէն (սոփը արաբ) կ'ելէ: Տճ. սոփը. Իս. Mastice.

6 Կարմիր չոր ու գիւրաբեկ խէժ մըն է, որուն ծառը Հնդկաստանի, Աֆրիկէի, Ամերիկայի և Չինու մէջ կը բուսնի. առջի կաթիլները խիստ ազնիւ են կարմրութեանը կողմանէ, բայց քիչ գտնուելուն՝ երկրորդական կաթիլները կը գործածեն. հայերէն կրտսեր նաև Ալբերտ արիւն. տճ. գորփառ 4-ու: Իս. Sanguie di drago.

ու քոփալ. աս խէժերուն շատը քանի մը ծառերուն կպչուն միջուկէն կը հանեն:

7 Առաջին աստիճանի աղէկ վերնիչ շինելու նուսխաները ասոնք են.

ա. Վընիւ գունով ամանները վերնիչտելու համար ան մէկուկէս ունկի գիհի խէժ, մէկ ունկի ձիւթ, ունկիին չորս մասին մէկը Ս ենետիկի բեւեկնի, և ութը ունկի գինիի ոգիքի մէջ խառնելով լուծէ:

բ. Գիմացկուն ու քիչ մը գունաւոր վերնիչ շինելու համար ան կէս լիպրէ գիհի խէժ, լիպրէին ութը մասին մէկուն չափ լաք, մէկուկէս ունկի Ս ենետիկի բեւեկնի, երկու լիպրէ գինիի ոգիք:

գ. Վեւի գիմացկուն վերնիչ շինելու համար, որ քիչ մը դեղնագոյն կ'ըլլայ, առ իրեք ունկի լաք, ունկիին չորս մասին մէկը Ս ենետիկի բեւեկնի, ու մէկ լիպրէ գինիի ոգիք:

դ. Վընի ցնդական վերնիչ շինելու համար ան մէկուկէս ունկի ձիւթ, ունկիին ութերորդ մասին մէկը Ս ենետիկի բեւեկնի և չորս ունկի բեւեկնի եղ:

ե. Սաստիկ գիմացկուն քոփալէ վերնիչ շինելու համար առ ութ ունկի քոփալ, մէկ ունկի Ս ենետիկի բեւեկնի, երկու ունկի ձիւթ, չորս ունկի կտաւատի եղով՝ լուծած գիհի խէժ, և տասնըչորս ունկի բեւեկնի եղ:

զ. Սաթէ վերնիչ շինելու համար առ ութ ունկի դեղին սաթ, չորս կուտ Ս էքքէի բալասան, երկու կուտ Պրազիլի բալասան, հինկ ուն.

1 Պեւի բուլ: 2 Գեհիգար: 3 Կուտը որ տճ. լէիբիլի կ'ըսեն՝ ունկիին քսան ու չորս մասին մէկն է:

4 Ասիկայ ձերմակ ու չոր խէժ մըն է որ Մէքքէն կ'ելէ, Տաճկններն ալ ուխտի գնացած ատեննին հետերնին կը բերեն:

5 Ասիկայ ալ Պրազիլի քոփալ ըսուած ծառը ճղքելով կը հանեն. երկու տեսակ է, մէկը զուտ ու ձերմակ, իսկ մէկը աղտոտ ու դեղնագոյն. վերջերու շատ օգտակար են, և Մէքքէի բալասանին յատկութիւնները ունին: Իս. Balsamo del Copai, կամ di Copaiba. Գղ. Copabu.

կի կտաւատի եղով լուծած գիհիի խէժ, և տասուերկու ունկի բեւեկնի եղ:

Ըստ ամէն խէժերը՝ բաց ՚ի սաթէն՝ պէտք է սաստիկ բարակ ծեծել, ետքը ապակէ անոթի մէջ դնելու է ու վրան գինիի ոգիքը լեցընելու է, ետքը կրակի մօտ դնելով լուծելու է. երբոր անոնք լուծուին, վրան աւելցընելու է բեւեկնի խէժը: Ըստ չորս նուսխայով շինուած վերնիչները շատ փայլուն կ'ըլլան, և ասոնցմով վերնիչոտած ամանները խիստ ազուր կ'երևան. իսկ հինգերորդ ու վեցերորդ նուսխաներով շինուածը աւելի դիմացկուն կ'ըլլայ, ինչպէս որ կը տեսնուի Չինացոց, Ղափոնցոց ու Բնգղիացոց շինած ճերմակ երկաթէ՝ ամաններէն:

Թիւնկրի բնալոյծը սաթն ու քոփալը հալեցընելու համար նոր վառարան մը հնարեց որ խիստ յարմար է աս բանիս. ասիկայ հասարակ կերակուր եփելու վառարանին նման է, միայն աւելի մեծ. ասոր վրայ յարմարցուցած է ճերմակ երկրթէ կաթսան՝ կոնոնաձև, տակը նեղ՝ բերանը լայն, վրան ալ խուփ մը ունի որ ուզած ատենդ կրնաս գոցել. իսկ վարի կողմը որ վառարանին մէջ կը մտնէ՝ բաց է:

Թիւնկրիին ըրած փորձերուն նայելով՝ սաթի ու քոփալի վերնիչը շատ աղէկ կ'ըլլայ՝ թէ որ աս չափովս բաղարբես. այսինքն 4 ունկի սաթ կամ քոփալ վերի ըսած վառարանիս մէջ հալեցուցած ու բարակ փոշի դարձուցած, 5 ունկի բեւեկնի եղ, և 5 ունկի ալ ոգիաւոր եղ կտաւատի. ասոնք ամէնն ալ լայն եղջերաձև ապակէ անոթով մը կաթսայի մը մէջ դնելու է, որուն մէջը լեցուն ջուր ըլլայ, ու կրակին վրայ տեղաւորելու է, ինչուան որ ջրին տաքութեամբը խէժերն ալ եղին մէջ հալին. ան ատեն պէտք է մէջը քիչ մը փոշի դարձած խէժ ալ աւելցընել. ետքը կրակէն ետ առնելու ու թողուլ է որ տակը նստի. յետոյ բամպակի կտակէ

1 Թէնէնէ: 2 Թէնձիբէ:

բամուկէ մը անցընելու է: Իսկ թէ որ վերնիչը շատ թանձր ըլլայ, պէտք է մէջը քիչ մըն ալ բեւեկնի եղ դնել ու տաքցընել: Թէ որ մէկը ուղենայ աւելի զուտ վերնիչ շինել, պէտք է մէջը աւելցընել ամէն մէկ մաս կտաւատի եղին երկերկու մաս բեւեկնի եղ, այնչափ ալ փոշի դարձած խէժ՝ որչափ որ կրնայ ուտել դրած եղզ:

Չիներուն շինած վերնիչն ալ խիստ աղնիւ է, և աս կերպով կը շինուի. ապակէ անոթի մը մէջ լեցընելու է մէկ լիպրէ գինիի ոգիք, մէկ ունկի լաք, երկու ունկի ձիւթ, երկու ունկի ալ գիհիի խէժ. (աս խէժերը ամէնն ալ բարակ ծեծուած պիտի ըլլան.) անոթին բերանը սնկէնիով՝ ամուր մը գոցելէն ետքը՝ քսանուչորս ժամարեւուն մէջ կամ մէկ ժամ կրակի վրայ թողուլ է: Երբոր խէժերը կը լուծուին ու գինիին ոգիքն ալ անոնց գոյնը կ'առնէ, պէտք է կտակէ բամուկի մէջէն անցընել, ապակէ անոթի մը մէջ լեցընել: Ըստ վերնիչին մէջ կինաբարիս խառնելով կը կարմրի, ժանգառ՝ խառնելով կը կանանայ, սև մուր՝ խառնելով կը սևնայ, և Պերլինի կապոյտ՝ խառնելով կը կապուտնայ:

Իսկ սաթէ շինած վերնիչը, որ թէ տաքութեամբ և թէ ցրտութեամբ շուտով կը չորնայ, և տախտակեղէններն ու անագեղէնները վերնիչոտելու շատ յարմար է, աս կերպով կը շինուի: Ըստ 8 ունկի սաթ, 2 կամ 3 ունկի կտաւատի եղ, 12էն ինչուան 16 ունկի բեւեկնի եղ. առաջ սաթը հալեցուր, ետքը կտաւատի եղն ալ տաքցընելով՝ վրան լեցուր, յետոյ բեւեկնի խէժն ալ նոյնպէս տաք տաք մէջը խառնէ. ետքը ասոնք ամէնքը

1 Մանկար:
2 Ժանգառին վրայ ուրիշ տեղ կը խօսինք:
3 Սև մուրը իւղային փայտերը այրելով կը շինուի. այսինքն թէ որ դմբեթաձև անոթի մը տակը մակր (լեթ) վառես, անկէց ելած ծուխին մուրը անոթին ներսի կողմը կը կպչի, որն որ ետքը զգուշութեամբ կը ժողվես: Իտ. կ'ըսուի Negro fumo.
4 Աս ներկին վրայ ուրիշ ատեն պիտի խօսինք:

մէկէն չափաւոր կրակի վրայ դիր ու
թող ինչուան սր բոլոր լուծուին . ետ-
քը կրակէն մէկդի առ , ու թող որ
պաղի . յետոյ ապակէ անօթի մը մէջ
առ , ու մէջը մէկ ունկիի չափ սղանգն¹
ու սպիտակադեղ² լեցուր , և օ կամ
6 որ շատ անգամ անօթը թօթվէ ,
ետքը երկու որ թող որ հանգչի . ան-
կէց ետքը հանէ դուրս , կը տեսնես
որ բոլոր վերնիչը մաքրուեր ու օտար
նիւթերէն զտուեր է :

Հ . 0 . ԳՈՒՐԳ :

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ե . Չախի վրայ :

() ԴՈՅ յատկութեանց վրայ խօսե-
լէն ետև , կը մնայ հիմա որ քանի մը
բան ալ ձայնի վրայ խօսինք , որուն
գլխաւոր պատճառը օդն է : Արբոր
օդոյ մէկ կտորը խտանայ կամ ան-
գայտանայ , բոլորտիքն եղած օդն
ալ շարժմունք մը կ'ունենայ , որ ծա-
ծանոսն կամ Խրխոսն կ'ըսուի . աս
ծածանումը երբոր հասնի մեր ակըն-
ջին թմբուկին , անոր լողական ջիղը
թրթռացընելով՝ ըզեղին կ'ազդէ .
ինչպէս նաև զանգակի մը լեզուն ,
կամ որ և իցէ մարմին ուրիշ մարմնոյ
հետ զարնելով , օդը կը թրթռայ , ու
անով ձայն կը լսենք . ուրեմն լողու-
թեան առջի պատճառը օդոյ թրթռու-
մունքն է , երկրորդը մեր ականջն է :
Այլ որպէս զի տեսնես թէ որ և իցէ
մարմին ինքիրեն ձայն չունի , հապա

ձայնը օդէն է , ասանկ դիւրին փորձ
մը կրնանք ընել . օգահան գործիքին
վրայ դիր ընդունարան մը՝ մէջը զան-
գակ մը կախելով , այնպէս սր կարե-
նաս զանգակը ուզած ատենդ զար-
նել . պարպէ ընդունարանին օդը ,
զանգակը զարկ , կը տեսնես որ ձայն
չելեր . ինչո՞ւ . վասն զի օդ չկայ որ
զանգակին թրթռումնքը ինչուան
լողական ջիղդ հասցընէ : Աորէն օդ
թող ընդունարանին մէջ , զանգակին
ձայնը կը լսես : — Աւրիշ հեղանիւթ-
ներն ալ կրնան մարմնոց թրթռուն-
քը հաղորդել . անոր համար է որ
ջրին մէջ ալ զանգակ մը զարնես նէ ,
ձայնը որոշ կը լսուի . և որպէս զի ի-
մանաս թէ ձայնը մարմնոց թրթռու-
մունքէն ու օդին հետ զարնուելէն
առաջ կուգայ , աս փորձս կրնաս ը-
նել . ան գաւաթ մը ջուր՝ ինչուան
բերանը լեցուն , յետոյ մատդ քիչ մը
թրջէ ու շրթունքին կտոր կտոր քսէ ,
աղուոր ներդաշնակուածին մը կը
ձևանայ . և կը տեսնես որ նոյն ժա-
մանակը գաւաթին մէջի ջուրն ալ
թրթռումնք կ'ունենայ մանր ու սի-
րուն ծածանմունքով , ու կտոր կտոր կե-
դրոնը կը հաւաքուի . թէ որ նոյն գա-
ւաթը ուրիշ լայն ամանով ջրի մէջ
դնես , ու փորձդ ընես , կը տեսնես
որ գաւաթին դրսի եզերքէն ալ դէպ
'ի մեծ ամանին եզերքը մեծ մեծ կտոր
չըջանակներ կը ձևանան , ինչպէս որ
ջրին մէջ քար մը նետելու ատենդ
ալ կ'երենայ . ասկէց կը հետևի թէ
ուրեմն հոս ալ ձայն հանողը գաւա-
թին մասանց թրթռումնքն ու օդուն
հետ զարնուիլն է , և թէ ձայնն ալ
լուսոյ ու ջերմութեան պէս իր չորս
բոլորը շառաւիղի ձևով հաւասար հե-
ռաւորութեամբ կը տարածուի :

Հաստատուն մարմիններն ալ օդոյ
և հեղանիւթի պէս կրնան ձայն հա-
ղորդել իրենց մասանցը թրթռալովը .
զոր օրինակ տախտակի մը վրայ երկը-
թէ թեւ կամ աղիքէ լար մը պրկէ ,
ու ականջդ մէկ ծայրին մօտ բռնե-
լով՝ մէկալ ծայրին ուրիշ մետաղով

1 Կապարը (գորշու) երկայն ատեն կրակի մէջ
այրելով կիր կը դառնայ . ետքը ասիկայ իրեք չորս
ժամ բնալուծական վառարանին մէջ դնելով կար-
ծիր գոյն մը կ'ունենայ . իտ . Minio կ'ըսուի . գլ .
Vermillon . աճ . ԳԵԼԷ ԳՅՅՄ ալ կ'ըսուի :
2 Քայախը եռացրնելու ատեն անկէց ելած շո-
գին վրայ կը բռնեն թերթ թերթ կապար , որ ան
թթուումէն մաշուելով՝ թերթին երեսը ճերմակ
մար կը կապէ . ասիկայ աճ . Իսպի-գէճ , իտ . Biacca
կամ Cerussa կ'ըսուի :